ՆՈՐ-ԴԱՐ

№ 212 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 16 Դեկտեմբերի 1888 Ուրբաթ 16 Դեկտեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 212

Տարեկան 10 րուբլի, վեց ամսվը՝ 6 րուբլի, երեք ամսվը՝ 3 ր. 50 կ., ամսվը՝ 1 ր. 50 կ., հատվը՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում՝ վիմեան խմբագրատանը։

Խմբագրութիւնն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների գնահատութիւնը 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՑ 1889 ԹՎԻԱԿԱՆԻՆ

(Վեցերորդ տարի)

Կը հրատարակուի նոյն չափով և ծրագրով

Խմբագրութիւնը կ'ստանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսեալ։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում Ղ. Ղոյայ «Նոր-Դար»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

ВЪ 1889 ГОДУ

(шестой годъ изданія)

будетъ выходить въ Тифлисѣ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической.

Условія подписки, съ пересылкою и доставкою: на годъ **10 р.**, на полгода—**6 р.**, на три мѣсяца—**3 р. 50 к.**, на одинъ мѣсяцъ—**1 р. 50 к.** *За границу*: на годъ—**17 р.**, на полгода—**9 р.**, на три мѣсяца—**5 р.** (Подписка принимается не иначе, какъ считая съ 1-го числа любого мѣсяца).

Объявленія: на 4-й страницѣ газеты по расчету **8 к.** за строку петита или за занимаемое ею мѣсто. На первой страницѣ—**15 к.** за такую-же строку.

Подписка и объявленія принимаются:

а) **ВЪ ТИФЛИСѢ: въ конторѣ газеты**, Головинскій проспектъ, домъ Читахова, № 12.

б) **ОТДѢЛЕНІЯХЪ КОНТОРЫ:**

1) **ВЪ БАКУ—при аптекарскомъ магазинѣ И. Г. Чубинова**, на Михайловской улицѣ, домъ Мирза-Авакова и Карабегова.

2) **ВЪ КУТАИСѢ—при книжномъ магазинѣ братьевъ Чиладзе**, противъ бульвара, въ домѣ Г. Андроникова.

3) **ВЪ БАТУМѢ—при конторѣ М. С. Бетанова**, Набережная, домъ Ферадъ-Бега.

в) **У АГЕНТОВЪ КОНТОРЫ:**

1) **ВЪ Г. ШУШѢ—С. О. Ананьева**, на площади Топханэ.

2) **ВЪ ГОРИ—Ир. И. Рамишвили.**

Въ отдѣленіяхъ и у агентовъ подписка и объявленія принимаются **по редакціоннымъ цѣнамъ**, безъ всякой надбавки. Розничная продажа тоже производится безъ увеличенія платы, **по 5 коп.** за номеръ.

Иногородные адресуютъ свои требованія: **Въ Тифлисъ**, въ редакцію „Новаго Обозрѣнія“.

Редакторъ **М. А. Успенскій.**
Издательница **О. А. Николадзе.**

(Խմբ.) 3—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Նպատակայարմար խորհրդածութիւններ Դ։

Քրոնիկոն.—Լուրեր։ † Գեներալ-ադիւտանտ կոմս Միքայէլ Տարիէլեան Լօրու-Մելիքեան։ Թարաքեամա Թուրքերը, զրանց ազդեցութիւնը Հայ գիւղացիների վրայ։ Եսկանի Նահանգում (վերջ)։ Կորուսեալ ոչխարը։

Թղթակցութիւններ. — Բէկլարքեանդ։ Կէօկչայ։ Գանձակ։

Քաղաքական. — Քաղաքական Լուրեր։ Խառն Լուրեր։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 15 դեկտեմբերի 1888.

ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Դ.

Բառերով, միմիայն փքուն բառերով ապրող և իւր ընթերցողներին կերակրող մամուլը պարտաճանաչ և լրջութեամբ գործող մամուլի վերաբերութեամբ այն դրութիւնն է ներկայացնում, ինչ դրութիւն ներկայացնում են Աֆրիկայի խորքերում կամ ովկիանոսի կղզիներում ապրող վայրենի ցեղերը եւրոպական քաղաքակրթուած ազգերի վերաբերութեամբ։

Վայրենիները եւրոպական արդիւնաբերութեան արտադրութիւնից ձեռք են բերում ինչպէս գդակ-ցիլինդը, կարմիր հովանոց, հայելի և ածելի, շաքար և օղի, գունաւոր ապակիներ և ուրիշ զանազան զիզի-միզիներ, որոնք կարող են վայրենիների աչքերը շլացնել և խելքից հանել, բայց դրանով խօ նրանք եւրոպական քաղաքակրթութիւն չեն ստանում, դրանով խօ նրանք չեն նմանւում եւրոպացիներին։

Բայց արի տես, որ այդ տգէտ, տլայաբարոյ, վայրի ցեղերը այնքան թշուառ դրութեան մէջ են, որ եւրոպացիներից ստացած այդ չնչին բաներն էլ, այդ զիզի-միզիներից էլ չարաչար վնասւում են, նրանց գործածութիւնը չգիտնալով։ Գդակը ըստ ինքեան հարկաւոր է եւրոպացուն, բայց ինչ ծաղրալի երևոյթ է, որ մարմնով մերկ վայրենին գլխին ցիլինդը դրած շրջում է։ Հովանոցը լաւ է արեգակի ճառագայթներից պաշտպանուելու համար, բայց ինչ միտք ունի հովանոցը, երբ նրան պարզում են երեկոյեան մութին։ Տեսնում է վայրենին, որ եւրոպացին խմում է օղի, բայց չէ հասկանում, որ այդ խմիչքը ցուրտ երկրի բնակիչների համար լաւ է և այն էլ՝ երբ որոշ չափով են գործածում։ Վայրենին օղի ամբողջ շիշը դատարկում է արեգակի կիզիչ ճառագայթների տակ։ Տեսել է վայրենին, որ եւրոպացին հայելին դնում է իւր առջևը և ածելով ածիլում է իւր մօրուքը։ Նա էլ դնում է հայելին իւր առաջ և ձեռքն է առնում ածելին և թրաշում է իւր երեսը ծնօտը բարձրացրած։

Ողորմելին չէ հասկանում, որ երեսը ածիլելու պայմանը միայն այն չէ, որ հայելի ու ածելի ունենալ, այլ հարկաւոր է, որ մօրուք, մազեր լինին երեսի վրայ և ծնօտի տակ։ Վայրենին տեսել է հայելին, տեսել է ածելին, բայց չէ հասկացել ածիլելու նպատակը։

Վայրենին հայելին նայելով և ածելին երեսին քսելով, անշուշտ երևակայում է այն եւրոպացուն, որ տեսել է ածիլուելիս, բայց չէ տեսնում, որ ածելին իւր չոր երեսին քսելով, երեսը արնոտել է և մի քիչ էլ ծնօտի տակ թրաշելով, իւր վիզն է կարում և—ընկնում մեռնում։

Ձիշդ այսպէս է վերաբերւում բառերով ապրող և գոռում-գոչում բարձրացնող մամուլը-դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը և այնքան օգուտ է բերում հասարակութեան, ժողովրդին իւր գոռում-գոչումով և չհասկացած բառերի անվերջ կրկնութեամբ, որքան վայրենին իւր երեսը ածիլելիս։

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեր Թղթակցից ստացանք հետևեալ հեռագիրը.

ՂԶԼԱՐ, 15 դեկտեմբերի, առաւօտեան ժամը 10-ից 27 վ. անց. — Թումբի պատուաստը ծածկուած չէ. քաղաքի մի մասը հեղեղուած է արդէն։

—

«Кавказъ» Թերթի պաշտօնական բաժնում կարդում ենք. «Գեներալ-ադիւտանտ կոմս Լօրու-Մելիքեանի մահուան առթիւ, Հայոց Վանքի առաջ եկեղեցում դեկտեմբերի 16-ին, առաւօտեան ժամը 11-ին պիտի կատարուի հոգեհանգիստ, որի մասին կառավարչապետի կարգադրութեամբ յայտարարւում է այն պաշտօնակատար անձերին, որոնք Թիֆլիսում են ծառայում։

—

ԱՂԴԱՇԻՑ. — Աղդաշի գաւառում չորս յայտնի աւազակներ, որոնք Սիբերիայի աքսորատեղից փախել վերադարձել են հայրենիք, երեսց նման արիւնխում Թուրքերի հետ միացած, Հենրիխ Մարտինի (այնպէս) հրացանները ձեռքերին, աւազակութիւն են անում։ Արդէն քանիսին սպանել և թալանել են։ Տեղական իշխանութիւնը բոլոր միջոցները ձեռք է առել, որպէս զի կալանաւորէ այդ աւազակային խումբը։ Մինչև այժմ յայտնի չէ այդ աւազակների ձերբ լինելը. պէտք է ասենք, որ տեղական ժողովրդի մեծամասնութիւնը Թուրքեր են։ Պէտք է նրանց ձեռքերում գտնուած բոլոր կատարելագործուած զէնքերը խլել։ Քրիստոնեայ բնակիչները զէնք չունին, երկու կողմն էլ պէտք է հաւասարութիւն լինի, որպէս զի մեր գաւառը աւազակներից ազատ մնայ։

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ. — Նոյեմբերի 22-ին տեղի ունեցաւ Թատերասէրների ներկայացումը։ Խաղացուեց Սունդուկեանի «Էլի մէկ գոհ» պիէսան. դահլիճը գրեթէ լի էր հանգիստականներով. խաղը անցաւ սպասածից աւելի լաւ։ Ժողովուրդը ուրախ տպաւորութեան տակ Թողեց Թատրոնական դահլիճը։ Ինչպէս հաստատ աղբիւրներից լսեցինք, զնդհանուր մուտքը եղել է 131 րուբլի 25 կոպէկ. իսկ ծախսը՝ 45 րուբլի 40 կոպէկ. ծախսը հանած մուտքից՝ մնացել է 85 ր. 85 կ., որն և յանձնուած է հայոց ուսումնարանների պանձապահ-հոգաբարձուին։

—

Դեկտեմբերի 14-ին, Անդրկովկասեան երկաթուղային վարչութեան մէջ ծառայող Ա. Մ. Բօբիսովի կինը մանելով յիշեալ վարչութեան մէջ, ատրճանակ է արձակում իւր ամուսնու վրայ հետից և ծանր կերպով վիրաւորում։ Առաջուց պատրաստած փայտոնի մէջ նստելով, կենք փախուստ է տալիս, բայց նրա ետևից հասնելով բռնում են նրան։ Գործից երևում է, որ այդ ամուսինները վաղուց է ջոկ-ջոկ են ապրում. իսկ սպանութեան պատճառը եղել է այն, որ մարդը մերժել է օգնել իւր կնոջը, որովհետև նա Թողած երեխ՝ ուրիշների հետ է ապրելիս եղել։

—

ԴԵՐԲԷՆԴԻՑ. — Հայոց գրամատիքական ակումբը խնդրել էր գաւառական Թատրոնասէրներից, որ յայտնեն երևն, Թէ պ. Սունդուկեանի պիէսաներից ծրտեղ և քանի անգամ են ներկայացուած։ Սրանով յայտնում ենք, որ Սունդուկեանի գրուածները ամենից շատ (Թիֆլիսից յետոյ) խաղացուել են Դերբէնդում։

Սունդուկեանի պիէսաները խաղացուել են Դերբէնդում 1872 Թուականից և վեր։

1) «Գիշերուան սարը լսէը է» խաղացուել է 4 անգամ. 2) «Քանդած օջախը» երկու անգամ։ «Գէսլօ»-ն—4 անգամ. «Խաթաբալա»-ն—3 անգամ. «Էլի մէկ գոհ»—1 անգամ։ Ընդամէն 1872—1888, այսինքն 16 տարուան ընթացքում նրա պիէսաները խաղացուել են 14 անգամ. գրեթէ տարէկն մինը։ Իսկ գաւառական քաղաքներում, տարէկնը մի ներկայացում տալը, մեծ բան է, քանի որ ներկայացմանը մասնակցող օրիորդ կամ տիկին շատ և շատ գժուարութեամբ են գրտնւում։

—

ԹԱՆԳԻՆԴԻՑ.—Իններորդ տարին է, որ տեղիս եկեղեցին Թերը է։ Վերջերումս տեղիս հայ հասարակութիւնը ժողովուելով վճիռ կայացրեց, որ հանգանակութեամբ աւարտեն եկեղեցու Թերին, սակայն այդ վճիռն էլ ապարդիւն անցաւ։ Եկեղեցու եզածչեզածը և մի քանի հարիւր րուբլի նուէրները ծախսելով, եկեղեցին գաւթէայ չհասաւ իւր վախճանին։ Ժողովուրդը յուսահատուած էր։ Նոյեմբերի 27-ին, կիրակի օրը մեր վիճակաւոր աւագնորդ Դեր. Ավազեանցը մի քանի ուղեկից քահանաներով բարեհաճեց այցելել Խանքենդին։ Սրբազանը ձիուց իջաւ եկեղեցու բակում, մտաւ փայտաշէն եկեղեցին, աղօթեց և օրհնեց ժողովրդին։ Այնուհետև դուրս եկաւ և նայեց նորակառոյց Թերի եկեղեցուն, օրհնեց խուռն ժողովրդեան, որոնք ահագարել էին գալ Սրբազան Հօր աչն համբուրելու։ Սրբազանը քաջալերեց ժողովրդեան, որ գոնէ եկեղեցին հասցրել են մինչև կամարները և յուսադրեց, որ իւր հսկողութեամբ չուտով միջոցներ կ'օրոնէ եկեղեցու Թերին աւարտ տալու։

Սրբազանը այդ օրը պ. Սարգիս բէկ Մադաթեանցի հիւրն էր, որը վայելուչ և փառաւոր կերպով հիւրասիրեց իւր հոգևոր իշխանին։ Գերապատիւ Սրբազան Հօր խօսքերն ու խոստումները մեծ ուրախութիւն պատճառեցին ժողովրդին, որը հաւատացած է, որ այս անգամ արդէն իւր եկեղեցու Թերին կաւարտի։ Սրբազանը խոստացաւ նոյնպէս ուսումնարանի առաջադիմութեան մասին հոգալ։

—

Դեկտեմբերի 13-ին Մանկի ընտանեաց օրհին քաղաքային Թատրոնում տուած ներկայացման բաւական ժողովուրդ էր եկած։ Զարուհեայա և Բիչուրինա դերասանուհիները մեծ ոգևորութեամբ ընդունուեցան։

—

ՕՋԱՀԱԿԱՆ (Գոհարիսի նաչ.) ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱՂՋԻԿԻ ՄԱՀՈՒՆ ԱՌԹԻՒ ՄԱՐՏԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿՈՍԻ ՕՐ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՅՈՒՐ ՄԱՐԳԱՐԷ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԼՕՅՍ ԾՆԱԾ ՅՈՒՆԻՍԻ 15-ԻՆ, 1888 Թ.

Ի ԽՈՐՈՒՄՍ ՍԻՐԵԼԻՔ ԱՄՈՒՍՆԻՍ ՀԱՐՅՈՒՐ ՄԱՐԳԱՐԷ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԱՂՋԻԿԸ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՀՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԱՐՄՆԻ ՄԱՐՏԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿՈՍԻ ՕՐ. ԿԱՏԱՐԵԱԼ ԵՒ ՀՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԱՐՄՆԻ ՄԱՐՏԻ 14—15 ՕՐԵՐՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆԳԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԻՍԱՑԱԾ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

ՆԱՀԱԳԱՀ՝ ՍԱՐԳԻՍ ՊԱՐՈՆ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ։

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՊԱՐՈՆ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ։

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՐՈՆ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ։

ՀՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՀՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԱՐՄՆԻ ՄԱՐՏԻ 14—15 ՕՐԵՐՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆԳԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԻՍԱՑԱԾ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ։

ՆԱՀԱԳԱՀ՝ ՍԱՐԳԻՍ ՊԱՐՈՆ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ։

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՊԱՐՈՆ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ։

ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՊԱՐՈՆ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ։

ԱԼՈՆ գիւղից.—Ապրիլ մէջ ես Ղոնաղ գիւղից Ալոնի վրայով անցնելիս, տեսայ, որ գիւղի մօտ մի մեծ ամպ է կանգնած։ Ես կարծեցի, որ կարկտահար է եղել, բայց երբ մօտեցայ, տեսայ, որ ամպը մի մեծ մորեխի երամ է։ Ես ինձ համար ասացի, որ մորեխը ուրիշ տեղ է գնում, որովհետև գիւղերի մէջ մորեխ չկայ։ Բայց երբ գիւղի մօտ հասայ, տեսայ, որ մորեխը գիւղի մէջ է մտել, ամէն տեղ նստել է, ծառերի վրայ, տների տանիքների վրայ, ճանապարհների վրայ, ամէն տեղ։ Ես ինձ համար ասացի, որ մորեխը ուրիշ տեղ է գնում, որովհետև գիւղի մէջ ոչ մի կանաչ բան չկայ։ Բայց երբ գիւղի մէջ մտայ, տեսայ, որ մորեխը ամէն տեղ է, ամէն տեղ կանաչ բան է կերել

Ի Տարեվերջին ընդհանուր հաշվեքննության առթիվ ամեն տարի ամենաշատ խոսվում է այն մասին, որ հարկատուները ստիպված են լինում ավելի ծանր հարկեր վճարել, քան թե պետք է։ Ամեն տարի հարկատուները բողոքում են, որ իրենց հարկերը ավելի են, քան թե պետք է։ Ամեն տարի հարկատուները պահանջում են, որ հարկերը պակասեցնեն։ Ամեն տարի հարկերը պակասեցնելու մասին խոսվում է, բայց ամեն տարի հարկերը ավելանում են։ Ամեն տարի հարկերը ավելանում են, որովհետև ամեն տարի ծախսերը ավելանում են։ Ամեն տարի ծախսերը ավելանում են, որովհետև ամեն տարի ավելի ու ավելի պետք է լինում ծախսել։ Ամեն տարի ավելի ու ավելի պետք է լինում ծախսել, որովհետև

ԴԱՆԶԱԿ, 12 դեկ.—«Նոր-Դար»-ի 208 համարի մէջ Գանձակից պ. Մ.-ի հազորդած լուրը գէպուտատի ընտրութեան մասին շատերը վերագրում են ինձ, ըստ որում պ. լրատուն կըրում է իմ ազգանուան սկզբնատառը։ Ուստի, պ. խմբագիր, խնդրեմ բարհաճէք տպելու, որ նախ՝ ես չեմ լուր հազորդողը և երկրորդ՝ որ ես մօտ ծանօթ լինելով այս անգամ կատարուած ընտրութեան բուն նպատակներէն հետ, համամիտ չեմ պ. լրատուի այն եզրակացութեան հետ, թէ քաղաքային վարչութիւն ցանկացող հասարակութիւնը երբ խնայում է 1000—1500 րուբլի ռոճիկ տալ մի հասկացող գէպուտատի, այլ ընտրում է այնպիսի մի մարդու, որ «վազից ձգտում է գէպուտատ լինելու և ձրի ծառայելու»...

Ինչպէս երևում է, պ. լրատուն այնքան էլ տեղեակ չէ գործին և ընթերցէլներէն հետ։

Թէ ժողովուրդը 11 տարի շարունակ գէպուտատներին ռոճիկ տալուց յետ այս անգամ ընտրութեան ժամանակ գրականապէս մերժեց ռոճիկ նշանակել գէպուտատին և. ընտրելիների այնպիսի մի ցանկ կազմեց, որոնցից ամեն մէկը, օրէնքի համաձայն, պարտական է ձրիաբար ծառայելու քաղաքին, հասարակութիւնը այդպէս վարուելով ունէր իւր յարգելի պատճառները..., որոնց բացատրելու մենք այստեղ աւելորդ և անյարմար ենք համարում։

Գալով նոր ընտրուած գէպուտատ պ. Գ. Ն.-ին, այսքանը պէտք է ասել, որ ընտրութեան հենց երկրորդ օրը երբ պատահեցանք պ. Ն.-ի հետ, հաստատ իմացանք, որ նա բոլորովին ցանկութիւն չունի վարելու այդ պաշտօնը և որ հրաժարական է տալու։ Գ. Ն. արդէն հրաժարականը ներկայացրել է։

Այսպիսի ճիշդ տեղեկութիւն ունենալուց յետոյ, շատ պարզ է, որ մենք չէինք կարող մէ անհեմն լուր հազորդել, թէ պ. Գ. Ն. վաղուց ձգտում էր գէպուտատ լինելու և ձրի ծառայելու։

Մ. Մկրտումեանց

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ՖՐԱՆՍԻԱ.— Ֆրանսիական կառավարութիւնը սենատին ներկայացնել մէ առաջարկ, որպէս զի օգնեն Պանամեան ընկերութեանը սնանկութենից ազատուելու համար։ Ցոյս ունին, որ այդ առաջարկը կընդունի սենատում, իսկ այնուհետև կընդունի և պատգամաւորների ժողովը։ Ընկերութեան վարչութեան մէջ հաւատում են ընկերութեան բաժանորդատէրերը և օրլիգացիա ունեցողները։ Մեծամասնութիւնը լիովին հաւատ է ընծայում Լեսէպսին։

ԳԵՐՄԱՆԻԱ.—Անցեալները գերմանական պարլամէնտում իշ. Բիսմարկի որդին, գերմանական արտաքին գործերի մինիստրութեան ատագ քարտուղար Հերբերտ Բիսմարկը խօսեց իւր առաջին, մեծ ճառը։ Նրա ճառը նախ և առաջ օրեկտիւ է. նա առանց ո և է աւելորդ խօսք գործածելու դիմում է իւր նպատակին։ Նա առհասարակ վատ չէ խօսում և իւր արտաքին ձևի քաղաքավարութեամբ յիշեցնում է անգլիական մինիստրների ճառերը, բայց նա չունի իւր ճառերի մի առանձնայատկութիւնը՝ «Թռուցիկ խօսքը»։ Բայց ընդհանրապէս նրա ճառը լաւ էր և մեծ ուշադրութեամբ ընդունուեց։ Պարլամէնտում իշխում էին դիպլօմատիկական բազմաթիւ ներկայացուցիչներ և խուռներն բազմութեամբ ժողովուրդ։

ԱՖՐԻԿԱ.— «Independance Belge» Թերթի ստացած տեղեկութիւններին նայելով, կօնգոյի կառավարչական շրջաններում կասկածում են, որ Լիմին-փաշան և Ստէնլին Մահդիի կուսակիցների ձեռքը գերի ընկած լինին, կարծում են, որ Աֆրիկայում երևացող այդ չարժումը կարող է միմիայն հերոպական պետութիւնների միահամուռ գործակցութեամբ վերջ ստանալ։ Կօնգոյի կառավարութիւնը Անգլիայի կառավարութեան առաջարկել է բանակցութիւն սկսել Մահդիի հետ գերիներին ազատելու մասին։ Սակայն Բրիւսէլում յոյս չունին, որ կարող լինին նրանց ազատելու, կարծում են, որ Օսման-Դիգման Լիմին-փաշայի և Ստենլիի գերութեան լուրը տարածել է, որպէս զի ստիպէ Անգլիային և Եգիպտոսին իրենց զօրքերը ետ կանչելու Սուդանից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հետաքրքիր երևոյթ.—Ամերիկեան «Chicago Tribune» Թերթը հետևեալ հետաքրքիր տեղեկութիւնն է հաղորդում. «Գիլլեսպալի և Զօնվիլլի միջև ապրում է մի ազգակատաէր, բժշ անունով, որի հետ հետեւեալ դէպքը պատահեց անցեալներում։ Մի անգամ երեկոյեան, խիստ ժողովրդի միջոցին, նա գնում է պարտէզ, որպէս զի հեռու քշէ երկու կատուներին, որոնք միայների բարդերի վրայ կռւում էին։ Կատուներն այնքան զբաղուած էին կռուով, որ ազգակատէրը խիստ շատ մօտենում է նրանց։ Այդ միջոցին խփում է կայծակը միայներին և սպանում է երկու կատուներին, իսկ ազգակատէրը մի հարուածով ազատում է սարսափելիօրէն եղած, երբ նա վերադառնում է տուն, կինը նրա դէմքի վրայ նկատում է կատուի պատկերը, որի պատճառը կայծակն էր եղել։ Կատուի պատկերը դուրս էր եկած դիւյմ և այն բոլորովին համապատ. կատուի ցցուած մազերը, բեխերը, ատամները—այս բոլորը պարզ երևում էր դէմքի վրայ, խեղճ ազգակատէրը սկսում է անմիջապէս լուանալ դէմքը զանազան օճառներով, քացախով և այլ միջոցներով, բայց կատուի պատկերը չէ հեռանում իւր դէմքի վրայից. մես օրը կատուի պատկերը աւելի նախանձել էր, իսկ նոյն օրուայ Հաշիւն արդէն բոլորովին ոչնչանում է։

Ամերիկական մի ուրիշ Թերթ պատմում է, որ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգներից մինում, կաթոլիկներ կայ մի տուն, որի պատուհաններից մինի ապակու վրայ նկարուած է սիրուն կնոջ պատկեր, որ չանթահար է եղել նոյնպէս փոթորկի ժամանակ, պատուհանի մօտ կանգնած միջոցին։ Նոյնպէս մի դէպք էլ անցեալները պատահել է Նիւ-Ջէրսէյում.—մի մանկամարդ կին, որ կանգնած է լինում իւր տան դրանը, սպանուում է կայծակի հարուածից. նրա մարմնի վրայ գտնում են այն ծառերի տերևները պատկերները, որոնց միջով կայծակն անցել էր. տերևները կարծես ամենապայծառ գոյներով գծած լինէին։ Նրա թաղման օրը տերևների պատկերները անհետացան մարմնի վրայից։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՄԵՐԳ

Շաբաթ, դեկտ. 17-ին, Բագու քաղաքում, Թաղիեվի թատրոնում կը լինի խմբական Համերգ Կարա-Մուրզայի։

SAINTAL DE MIDY

Pharmacien de 1-re classe, à PARIS

permis en Russie

ՍԱՆՏԱԼ ԴԸ-ՄԻԴԻ

Պարիզի առաջնակարգ դեղագործ Պ. Միդիի Ռուսաստանում ընդունուած.

Գտնւում է Պարեզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։

(Մ.) ե 30—15

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ

Պատրաստ է և ծախւում է շերամի սերմ, դեղին իտալական բուժուժից, որ երեք տարի է աջողութեամբ գնում է Կովկասում։

Յանկացողները թող վաղօրօք յայտնեն մեզ իրենց պահանջը։

Գինն է 80 կոպ. ամեն մի զօլոտնիկին.

1/4 ֆունտից աւել առնողներին զիջումն կը լինի։

Հասցէն—Дербентъ. Константину Г. Мелик-Шахназарянцъ.

20—5

РОДИЛЬНЫЙ ПРІЮТЪ

акушерки

С. З. ИЗАНОВОЙ

Солодки, Садовая ул., д. № 42.

ԾՆՆԴԱՐԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

ՍՕՖԻԱ ԽԻԶԱՆԵԱՆԻ

Ծովեակ, Պագովայա փողոց, տ. № 42.

Թէ ցերեկուայ և. Թէ գիշերուայ ամենայն ժամանակ՝ ընդունւում են յղիներ, երկունքով բռնուածներ (ցաւոտները) և ծննդականներ, որոնք խնամւում են չարունակ մանկաբարձի հսկողութեան տակ. տրւում է նրանց նաև սպիտակեղէն և կերակուր։

Ծննդի և ծնդից հետևող շրջանի խնամատարութեան համար վճարում են՝ 50 րուբլի (առանձին սենեակում) և 10-ից մինչև 30 րուբլի (ընդհանուր սենեակներում)։

Օրական 1-ից մինչև 3 րուբլի

X—40

Նաւային երեւելութիւն Բաթումից, Օդեսայի և կ. Պոլսի միջև, նոյեմբերի 5-ից սկսած.

Բաղադրիչ գնամ է

Հինգշաբթի՝—Ճաշից յետոյ ժամը 4-ին, ուղիղ գծով՝ Նովոռօսիյսկի և Կերչի վրայով։

Շաբաթ՝—երեկոյեան ժամը 8-ին, շրջանառու գնացքով բոլոր նաւահանգիստներով։

Երկուշաբթի՝—երեկոյեան, արտաոհմանեան գնացքով կ. Պոլիս։

Բաղադ գայիս է

Երեքշաբթի՝— կէս գիշերուայ մօտերքը, Օդեսայից, շրջանառու գնացքով։

Ուրբաթ՝—առաւօտեան, Օդեսայից, ուղիղ գծով՝ կերչի և Նովոռօսիյսկի վրայով։

Շաբաթ՝—առաւօտեան, կ. Պոլսից։

Գնացքները Ֆեոդոսիայի հետ

Երեքշաբթի՝—Սուխումից եկող Ղրիմ-Կովկասեան շոգենաւի մօտ։

Հինգշաբթի՝—առաւօտեան ժամը 9-ին, Ղրիմ-Կովկասեան ուղղագիծ մարգակից շոգենաւին։

Շաբաթ՝ — առաւօտեան ժամը 9-ին Ղրիմ-Կովկասեան և Բուժկիլիա-Անատոլեան շրջանառու մարգակից շոգենաւին։

Չորեքշաբթի՝—երեկոյեան, որոշեալ ժամանակամիջոցներում ուղևորող ապրանքակից շոգենաւ։

Բաղադ Փոքրիկ գնամ է

Ուրբաթ և կիրակի՝—ցերեկուայ ժամը մօտ 2-ին։

Երկուշաբթի՝—Օդեսայից Ղրիմ Կովկասեան նաւահանգիստներով եկող ապրանքակից շոգենաւը։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

երեւելութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մարք. գն. 3 ժ. 21 վ. ց.
Ազստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.

Գալիս է

Բաթումից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, ,, 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մարդ. 8 ժ. 24 վ. առ.
Ազստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ԽԼՈՒԹԻՒՆ ՈՒ ԽՅՃՈՑ ԳԼԽԻ ՄԷՋ

Ինչպէս ազատուի մարդ այդ տկարութիւնից

Բացատրութիւնների մասին դիմել, ռուսերէն կամ ֆրանսերէն լեզուով գրած, Ի. Գ. Նիկոլաօնին 4 rue, Drouot. Պարիզ (Ֆրանսիա)

15—9

ԴՕԿՏՕՐ ԺԵՐԱՐԻ ԵՐԿԱԹ

ՌՈՒՍԻԱՑՈՒՄ ԹՈՅԼԱՏՐԱԾ

Այս երկաթեայ դարմանն թերթևակի լուծողական լինելու առաւելութիւնն ունի. Պարիզի Բժշկական Ճեմարանի Հաշիւը ցոյց է տալիս, որ նա աջողութեամբ գործ է դրւում տէմֆէ տեղնութեան, արեան նուազութեան կամ անբիծի դէմ։

Դեպօն գտնւում է Պարիզում, 8, rue Vivienne, և Ռուսիայի նշանաւոր դեղատներում։ 26—12

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառւում են Թրխմեան Հայրիկի հետևեալ գրքերը.

1) Դրախտի ընտանիք, . . . գինը 1 ր. ճ. ծախքը 25 կ.
2) Սիրաք և Սամուէլ, . . . — 1 ր. » » 25 »
3) Մարգարիտ արքայութեան, — 50 կ. » » 15 »
4) Յիսուսի վերջին շաբաթը, — 50 կ. » » 15 »

(ա.) 6—3

ՆԵՐԿԱՐԱՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԱՏՐՃԵԱՆՑ

ՏԱՃԿԱՍՏԱՆՑԻ

Պատիւ ունի ծանուցանելու, որ սկսած է քաղաքումս ներկարարութիւն, կարող է եւրոպական ամեն տեսակ գոյներ անխտիր ներկել, և ի հարկին գոյներն վեր առնելով ուզուած գոյնը տալ, դիւրամատչելի գներով. պէտք է դիմել Շադինովի հին քարվանսարայում № 14.

6—5

ՌՅԻՀԿ ՄԻՍԱՔ ԸՐԱՄԱԲԱՆՑ

ՍԱԼԻՍԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ

Նկարագիրը

ՈԻԽՏԱԻՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ

Քաղաքներ փոխադրութիւններով

Գինն է 50 կոպէկ

Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ռ—58

ԳՕԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԷԿՏԻ ՎՐԱՑ

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ

ՆՈՐ ԲԱՑ ԸՐԱՆՑ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Մէրճհանեանի փանջ, Նահանգապետի պատրանի դէմ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ առացուած է արտասահմանեան և ռուսական նոր՝ տղամարդկերանց և տղաների հագուստ։

ԴՈՎԼԱԹԵԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՈՒԱՑ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Գօլովինսկի պրօսպէկտի վրայ, Մերզոյեանի տանը (նախկին Բելլեի)

ՄԱԳԱԶԻՆԸ ՓԱԿՈՒԵԼՈՒ ԱՌԹԻԻ

Վերջնական էժան վաճառքի է նշանակած

ՄԵԾ ԶԻՋՈՒՄՈՎ

Մինչև դեկտեմբերի 24-ը, այնտեղ մնացած ապրանքի։

19—12

Дозволено цензурою. Тифлисъ, 15-го Декабря 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրատեղեակի Типографія конторы газеты Кавказъ, Гор. пр., д. Читахова